Սուրբ Ծնունդ, Ավետարանի պատառիկ, ԺԵ. դար, Վասպուրական

Մկրտություն, Ավետարանի պատառիկ, ԺԵ. դար, Վասպուրական

«Մի՛ վախեցեք...»
(Ղուկ. Բ. 10):

Ղուկասու Ավետարանի ծննդյան պատումը բազմաթիվ մանրամասներ է ներկայացնում, որոնցից հատկապես ուշագրավ է հրեշտակի ավետիսի դրվագը հովիվներին. «Մի՛ վախեցեք, որովհետեւ ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում»... Փրկչի ծննդյան մասին խորհրդածությունները, իհարկե, կարող են սուրբգրային բազմաթիվ տեղիներով ու մեջբերումներով մեկնաբանվել. աշխարհին պարգեւվող փրկությունը կարելի է պարզապես իրար կցել աստվածաշնչյան շարունակական մեջբերումներով՝ Ծննդոցից մինչեւ Հայտնության գիրք: Քանզի հենց այդ է քրիստոնեական փրկության պատգամի յուրահատկությունը. անխզելի շղթայի նման ամբողջ նախախնամությունը մարդու փրկության վերաբերյալ իրար է կապում հեռավոր անցյալը մեզ համար սովորական դարձած ներկայի հետ՝ լուսավոր պատուհան բանալով դեպի ապագա: Եվ ամեն անգամ Փրկչի ծննդյան մասին խորհրդածելիս մենք քաշում ենք շղթան, բացում պատուհանն ու գաղտուկ, երբեմն անակնկալի սպասող հուզված հայացքով նայում լուսավոր ապագային բացվող պատուհանից:

2017 թվականին հրեշտակի հուսադրող խոսքն այդ շղթայի հերթական օղակն է...

Ինչպես Նրա ծնունդից առաջ, այնպես եւ Հարությունից հետո «մի՛ վախեցեք» արտահայտությունն ավետիսի հնչողություն եւ իմաստ ունի (հմմտ. Ղուկ. Բ. 10-ԻԴ. 36): Աստծո ծնունդն ու հարությունը քաջալերության, նոր տեսլականի ոգեւորիչ ավյունով է լցնում մարդկանց սրտերը: Հրեշտակի այս խոսքը, ասես, բազմաձայն, ներդաշնակ, ստեղնաշարի վրա նվագվող երաժշտություն է, որի ամեն հնչյուն մի նոր իմաստ ու երանգ է

տալիս մոլորակի բազմամիլիարդանոց բնակչությանը... Այն բազմիմաստ ու ներքին խորը բովանդակությամբ մի պատգամ է մեզ ամենքիս.

- «Մի՛ վախեցեք»՝ նայելու երկինք եւ խնդրելու ձեզ Անծանոթ մեկի օգնությունը:

- «Մի՛ վախեցեք»՝ մրմնջալու գոհաբանության եւ շնորհակալության խոսքերը քնելիս եւ արթնանալիս, ձեր ընտանիքին գգվելիս ու ընտանեկան հարկի ջերմությունից հրճվելիս:

- «Մի՛ վախեցեք»՝ սեղմելու ձեր մերձավորի՝ ծանոթի ու անծանոթի ձեռքը եւ ներողություն հայցելու գիտակցված ու չգիտակցված սխալների համար:

- «Մի՛ վախեցեք»՝ բացելու ձեր սրտերը լայն ու պարզ՝ անծանոթ եւ ծանոթ աղքատների, մուրացիկների, որբերի ու այրիների առաջ:

- «Մի՛ վախեցեք»՝ ձեր հոգու եւ սրտի մեջ Աստծո Որդու նման աղքատանալու՝ կատարյալ ու հարատեւ բաշխումից եւ զոհաբերությունից:

- «Մի՛ վախեցեք»՝ բացելու ազատության, հանդուրժողականության, տնտեսական ու հասարակական, ազգային ու պետական զարթոնքի դռները:

- «Մի՛ վախեցեք»՝ սաստելու բռնությունը, վանելու անտարբերությունը, մեկընդմիշտ փակելու ատի ու կեղծավորության բերանը, մեզանից հեռացնելու կեղծիքն ու աշխարհին կառչած մոլուցքը:

- «Մի՛ վախեցեք»՝ մանկացյալ Փրկչի բերած նորոգությամբ, հարատեւ ու մշտամնա հոգեւոր կատարելագործմամբ:

- «Մի՛ վախեցեք»՝ փոխելու ինքներդ ձեզ, ձեր հոգին, ձեր մտակեցվածքն ու ընկալումները:

- «Մի՛ վախեցեք», երբ ձեր ձեռքը մեկնեք նոր տարվա ու նոր ժամանակի մահճին՝ հերկելու համար կյանքից ու ժամանակից բաժին հասած ձեր երջանկության արտը:

- «Մի՛ վախեցեք»՝ հավատի, սիրո եւ հույսի բերած անսովոր զգացումներից, սիրտն առագաստի նման ուռչեցնող Սուրբ Հոգու շնչից:

- «Մի՛ վախեցեք»՝ լուսավորվելու, արդարանալու եւ կատարյալ դառնալու աստվածացման ճանապարհի դժվարություններից:

- «Մի՛ վախեցեք», երբ ձեր աղոթքներին պատասխան չլսեք, երբ կորցնեք Աստծո ներկայության զգացումը, երբ չզգաք Աստծո խոսքի ձայնը...

- «Մի՛ վախեցեք», որովհետեւ այդ պահերին Աստված լուռ է... եւ Աստված ժպտում է ձեզ...

Շ. Ծ. ՎՐԴ.